

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017թ.

Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգին ուղղված ծախսերի հիմնական նպատակը համակարգի ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար նախադրյալների ստեղծումն է: Դրանց շարքին կարելի է դասել համակարգի ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող երաշխիքների արմատավորումը:

ՀՀ արդարադատության նախարարության հիմնական խնդիրներն են.

ա) Հանրապետության օրենսդրության որակի բարձրացումը և օրենսդրության մեջ ներքին հակասությունների բացառումը.

բ) Դատաիրավական համակարգի հետագա զարգացումը, դատական համակարգի անկախության և հասարակության հանդեպ հաշվետվողականության ապահովումը.

գ) Արդարադատության ակադեմիայի գործարկման աջակցությունը, ներառյալ համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ինչպես նաև տեխնիկական աջակցության տրամադրումը.

դ) Քրեակատարողական հաստատությունների բնականոն աշխատանքի և հետագա էվոլյուցիոն բարեփոխումների ապահովումը, ներառյալ Արմավիր քրեակատարողական հիմնարկի առաջին մասնաշենքի շահագործումը՝ ԵԽ չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև քրեակատարողական ենթակառուցվածքի հետագա զարգացումը.

ե) Գործարար միջավայրի հետագա զարգացումը՝ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների և լրացումների կատարումն ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով.

զ) Էլեկտրոնային քաղաքացիական ռեգիստրի (էլ. ՔԿԱԳ) համակարգերի հետագա զարգացումը՝ էլ ՔԿԱԳ համակարգի թղթային արխիվների թվայնացման շարունակականության ապահովումը.

է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների կատարման բնականոն ապահովումը.

ը) Ամբողջությամբ ծրագրային բյուջետավորման համակարգին անցումն ապահովելը.

Ավարտին հասցնելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի մշակման աշխատանքները, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը և մի շարք այլ իրավական ակտերի նախագծեր:

թ) Շարունակել բարեփոխումները քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝

թա) Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի համաձայն նոր քրեակատարողական օրենսգիրք մշակելը: Քրեական արդարադատությանն ուղղված բարեփոխումների իրականացումը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերում, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգերի սահմանումը:

թբ) քրեակատարողական ոլորտի բարեփոխումները, որոնք ուղղված են իրավական դաշտի վերանայմանը, օրենքների և ենթաօրենսդրության կիրարկման կատարելագործմանը, ազատազրկված անձանց թվի կրճատմանը, ազատազրկման արժանապատիվ պայմանների երաշխավորմանը, նոր քրեակատարողական հիմնարկների կառուցմանը, ազատազրկվածների հետ տարվող սոցիալ-իրավական աշխատանքների շրջանակի ընդլայնմանը, կադրային ռեսուրսների կառավարման և

վերապատրաստման, ինչպես նաև քրեակատարողական համակարգում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը:

թգ) պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչների հստակեցումը: Միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկներում հացադուլ իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանումը:

ժ) Քրեակատարողական համակարգից անկախ պրոբացիոն ծառայության արդյունավետ գործարկումը.

ի) Իրավական և համակարգային բարեփոխումների իրականացումը նաև նոտարական համակարգում, որոնք ուղղված կլինեն մատուցված ծառայությունների որակի բարձրացմանը և ծառայությունների մատուցման ժամկետների նվազեցմանը:

լ) Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացները, որպես առաջնային խնդիր դիտարկելով կատարողական վարույթների ժամկետների նվազեցումը և կատարողական թերթի վերացումը:

խ) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում բարեփոխումների իրականացումը՝ ուղղված համակարգի թվայնացմանն ու ծառայությունների որակի բարձրացմանը:

ծ) Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է նաև անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը:

Վերոհիշյալ խնդիրների իրագործման նպատակով 2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը պետական բյուջեից ֆինանսավորվել է հետևյալ ծրագրերի գծով.

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի պահպանում/,

• Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի պահպանում/,

• Նախարարության <<Ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի պահպանում

• << արդարադատության նախարարության <<Անձնական տվյալների պաշտպանության գործակալության>> պահպանում

• ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում,

• Փորձաքննությունների ծառայություններ,

• Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում,

• Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր,

• Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ,

• Թարգմանչական ծառայություններ,

• Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը,

• << արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում,

• Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստում

• Վերապատրաստման ծառայություններ,

• Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների

կրթաթոշակ:

Այժմ անդրադառնանք նշված ծրագրերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

01.01.01.04 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Նախարարների աշխատակազմերի մասով /01.01.01.04/ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել է 90461.3 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 99086.3 հազ. դրամ: Տարվա ընթացքում կատարվել է միջծրագրային վերաբաշխում՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով 01.01.01.05/» ծրագրի գծով նախատեսված միջոցներից 8625.0 հազ. դրամ նպատակաուղղվել է Նախարարների աշխատակազմերի մասով պահպանման ծախսերին: Վերջինս պայմանավորված է տարվա ընթացքում կատարված վերջնահաշվարկների փոխհատուցման անհրաժեշտությամբ: Ֆինանսավորումը այս ծրագրի գծով կազմել է 97552.67 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 97552.67 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 97759.56 հազ. դրամ: 2017 թվականի գործունեության արդյունքում այս ծրագրի գծով առաջացել է պարտք «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի գծով՝ 56.23 հազ. դրամ, որի պայմանավորված է տարվա ընթացքում վճարված վերջնահաշվարկի գումարներով :

ՀՀ 2016 թվականին այս ծրագրի գծով դրամակղային ծախսը կազմել է 93699.50 հազ. դրամ: 2017 թվականին 2016 թվականի համեմատ ծախսի ավելացումը պայմանավորված է աշխատանքից ազատված աշխատակիցներին վճարված վերջնահաշվարկների գումարներով:

2017թ. նախատեսված գումարներից տնտեսվել է 1533.63 հազ. դրամ, ինչը պայմանավորված է ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ:

01.01.01.05 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Նախարարությունների աշխատակազմերի մասով ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1442443.3 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը

կազմել է 1433418.3 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել 1420145.08 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 1419920.16 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1415354.18 հազ. դրամ: Նախատեսված գումարներից տնտեսվել է 13273.22 հազ. դրամ, ինչը պայմանավորված է ապրանքների և ծառայությունների նախատեսվածից ավելի ավելի քիչ քանակությամբ, ինչպես նաև ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ:

ՀՀ 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 1116706.54 հազ. դրամ: 2016 թվականի համեմատ 2017 թվականի ծախսի ավելացումը պայմանավորված է հաստիքային միավորների ավելացմամբ՝ կապված պրոբացիայի ծառայության և անձնական տվյալների պաշտպանության գործակալության հետ:

01.01.01.12 «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանում

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 21522.5 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 20344.27 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 20322.71 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 20322.71 հազ. դրամ: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմում է նախատեսված տարեկան բյուջեի 94.4%:

ՀՀ 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 20413,59 հազ. դրամ: , Թերի իրացումների հիմնական պատճառներն այն է, որ որոշ հոդվածների գծով ծախսեր կատարելու անհրաժեշտություն չի եղել:

01.01.01.14 ՀՀ արդարադատության նախարարության <<Անձնական տվյալների պաշտպանության գործակալության>> պահպանում

Այս ծրագրով «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսվել է 22615.0 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է

22615.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 22615.0 հազ. դրամ, դրամակղային և փաստացի ծախսը՝ 22412.94 հազ. դրամ:

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 16176.1 հազ. դրամ: 2017թվականին ծախսի ավելացումը պայմավորված է հաստիաքային միավորների ավելացմամբ և հաստիքների համալրմամբ:

01.03.01.03 ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է 321220.3 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 321220.3 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 314916.17 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 313163.29 հազ. դրամ: ՔԿԱԳ տարածքային բաժինների պահպանման ծախսերից 6306.92 հազ. դրամ վարչական տարածքների ղեկավարների կողմից 28.12.2016թ. ետ է վերադարձվել արդարադատության նախարարության համապատասխան հաշվին, որից էլ այն վերադարձվել է պետական բյուջե: 01.01.2017թ. տարեսկզբի 641.02հազ. դրամ դեբիտորական պարտքից 158.67 հազ. դրամը 2017 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վարչական տարածքների ղեկավարների կողմից նույնպես վերադարձվել է պետական բյուջե:

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 317592.06 հազ. դրամ: Այս ծրագրով նախատեսված գումարները օգտագործվում են վարչական շրջանների կողմից՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների պահպանման համար: Չօգտագործված գումարները վարչական տարածքների ղեկավարների կողմից ետ են վերադարձվում պետական բյուջե:

01.06.01.04 Փորձաքննությունների ծառայություններ

Ծրագրի նպատակն է ապահովել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերումը պետական կարիքների համար՝ քրեական հետապնդման մարմինների որոշումների հիման վրա:

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Փորձաքննությունների ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 235782.2 հազ. դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 235782.2 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 235782.2 հազ. դրամ:

2016թվականին դրամարկղային ծախսը կազմել է 224422.40 հազ. դրամ: Ծախսը կատարվել է տարեկան ճշտված նախահաշվի սահմաններում:

03.03.02.02 Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տված փաստաբանների վարձատրության նպատակով 2017 թվականին նախատեսվել է 377272.10 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 377272.10 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային 377272.10 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 376716.37 հազ. դրամ: 2016 թվականին գոյացած 2755.87 հազ. դրամ կրեդիտորական պարտքը 2016 թվականի ընթացքում մարվել է փաստաբանների պալատի կողմից:

2016թվականին դրամարկղային ծախսը կազմել է 377272.10 հազ. դրամ:

08.03.02.07 Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ

Այս ծրագրով նախատեսված գումարներով իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) ու «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, ինչպես նաև «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները:

2017 թվականին «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 342686.3 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 342686.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 336243.58 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 336095.31 հազ. դրամ: Այս ծրագրի գծով առաջացած տնտեսումը՝ 6422.72 հազ. դրամը, պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերմամբ:

Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրերի պարբերական հրատարակությունը մինչև տարեվերջ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը 2017 թվականին ՀՀ կառավարության 23.11.2017թ. թիվ 1463-Ն որոշման համաձայն լրացուցիչ հատկացվել է 23000.0 հազ. դրամ, որից փաստացի ծախսվել է 22988.34 հազ. դրամ:

2016 թվականին «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով դրամարկղային ծախսը կազմել է 345901.70 հազ. դրամ: 2016 թվականի համեմատ 2017 թվականի դրամարկղային ծախսի տարբերությունը պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերմամբ:

08.03.02.09 Թարգմանչական ծառայություններ

2017 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 217406.7 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 216683.62 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 217406.7 հազ. դրամ: 2016 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով դրամարկղային ծախսը կազմել է 217468.50 հազ. դրամ: Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ 2016 թվականի ընթացքում կենտրոնին փոխանցված գումարներից չի ծախսվել 723.08 հազ. դրամը: Թարգմանչությունների կենտրոնին այդ գումարի չափով պակաս գումար է հատկացվել: 2017 թվականին Կենտրոնը պետք է ապահովեր 25577 էջ թարգմանություն: 2017թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ կատարվել է 25581 էջ թարգմանություն:

Թարգմանված էջերի 44 տոկոսը կազմել են հայերենից ռուսերեն թարգմանությունները, 21 տոկոսը՝ հայերենից անգլերեն, 15 տոկոսը՝ ռուսերենից հայերեն, իսկ 20 տոկոսը՝ անգլերենից հայերեն թարգմանությունները: Ըստ փաստաթղթատեսակային կազմի էջաքանակի բացվածքը հետևյալն է. ՀՀ/ԵԱՏՄ/ԵՀ իրավական ակտեր՝ 18716 էջ, միջազգային պայմանագրեր՝ 2115 էջ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ և հարակից փաստաթղթեր՝ 710 էջ (16 վճիռ, ինչպես նաև ՄԻԵԴ ներկայացվող այլ հարակից փաստաթղթեր), այլ երկրների հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ հարաբերությունների շրջանակներում դատական ակտեր և հարակից փաստաթղթեր՝ 1341 էջ, և ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն ներկայացվող ազգային զեկույցներ, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող փաստաթղթեր, ՀՀ վերաբերյալ միջազգային և միջկառավարական կազմակերպությունների կողմից ներկայացվող զեկույցներ և այլ առանցքային փաստաթղթեր ու իրավական ակտեր՝ 2699 էջ:

09.05.02.04 ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2017 թվականին նախատեսվել է 331427.2 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 315453.6 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 315410.4 հազ.դրամ: Գումարը նախատեսվում է ելնելով վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակից, ինչպես նաև դասընթացների տևողությունից:

2017 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2525 մարդ: 2017 թվականին մեկ դասընթացի տևողությունը եղել է 72 ակադեմիական ժամ:

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2016 դրամարկղային ծախսը կազմել է 332546.10 հազ.դրամ: 2017 թվականին ծախսն իրականացվել է տարեկան ճշտված նախահաշվի սահմաններում:

2016 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2525 մարդ:

2017թվականին վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունների ձեռքբերման գծով ծախսի տարբերությունը 2016 թվականի համեմատ պայմանավորված է վերապատրաստման և հատուկ ուսուցման մեկ ակադեմիական ժամի համար սահմանված արժեքով: 2016թվականի համար ակադեմիական ժամի արժեքը սահմանվել է ՀՀ կառավարության 20.01.2016թ. թիվ 23-Ն որոշմամբ, իսկ 2017թ.' ՀՀ արդարադատության նախարարի 23.01.2017թ. թիվ 33-Ա հրամանով:

09.05.01.12 Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը

2017 թվականին «Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրի գծով նախատեսվել է 23183.5 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 17183.50 հազ. դրամ, ՀՀ կառավարության 23.11.2017թ. թիվ 1463-Ն որոշմամբ այս ծրագիրը պակասեցվել է 6000.0 հազ. դրամով: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 15973.6 հազ. դրամ:

2016 թվականին «Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրի գծով դրամարկղային ծախսը կազմել է 23166.60 հազ. դրամ :

09.05.02.12 Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստում

Այս ծրագրով գումարներ նախատեսվել են սկսած 2017 թվականից: 2017 թվականին նախատեսվել է 5538.0 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 5538.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 5538.0 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 4098.12 հազ. դրամ: 2017 թվականին նախատեսվել է վերապատրաստել 50 աշխատակցի, սակայն ներկայացել են 37-ը:

09.05.02.09 Վերապատրաստման ծառայություններ

Այս ծրագրի նպատակն է դատական ծառայողների և դատախազության աշխատակազմի պետական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման ապահովում:

2017 թվականին նախատեսվել է 230167.2 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 230167.2 հազ. դրամ: Ֆինանսավորման և դրամարկղային ծախսը

կազմել է 230167.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 229962.1 հազ. դրամ: 2017 թվականին ճշտված բյուջեով գումարը նախատեսվել է 1032 ունկնդիրների համար: Տարբեր մարմինների կողմից ներկայացված հայտերով 1032 ունկնդիրներից վերապատրաստում են անցել թվով 986 ունկնդիր: 46-ը տարբեր պատճառներով չեն ներկայացել:

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 248084.60 հազ. դրամ, վերապատրաստում են անցել 1274 ունկնդիր:

09.05.02.10 Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ

2017 թվականին նախատեսվել է 64620.00 հազ. դրամ: Ճշտված բյուջեն կազմել է 47620.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 23.11.2017թ. թիվ 1463-Ն որոշմամբ այս ծրագիրը պակասեցվել է 17000.0 հազ. դրամով: Ֆինանսավորում, դրամարկղային ծախսը կազմել է 47399.57 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 47399.47 հազ. դրամ: 2017 թվականին նախատեսված ունկնդրի փոխարեն մասնագիտական վերապատրաստում են անցել 36 դատավորի և դատախազի թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք:

2016 թվականին նախատեսվել է դրամարկղային ծախսը կազմել են 22613.32 հազ. դրամ:

2016 թվականին նախատեսված 30 ունկնդրի փոխարեն մասնագիտական վերապատրաստում են անցել 18 ունկնդիրներ, որից 9 դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ավարտել են ս.թ. հունիսի 17-ին /վերջիններիս ուսումնառությունն սկսվել էր 2015 թվականին/:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 9 անձանցից մեկը ՀՀ գլխավոր դատախազի 14.06.2016թ.թիվ 172-Ա հրամանով հանվել է ցուցակից:

01.01.03.04 Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ

2017 թվականին «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 18015.28 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 17671.47 հազ. դրամ, 2016 թվականին «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 25389.91 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 24747.68 հազ. դրամ:

01.01.03.03 Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն

2017 թվականին «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» ծրագրի գծով ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 1526.5 հազ. դրամ:

2016 թվականին «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» ծրագրի գծով ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 6231.33 հազ. դրամ:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ 11.01.01.01

2017 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախարարությանը նախատեսվել է 150639.53 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 140267.76 հազ. դրամ, դրամարկղային ծախսը 140267.76 հազ. դրամ:

«Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն»/10.03.01.03/

Հայաստանի Հանրապետության վարչապետի 06.10.2017թ. թիվ 1139-Ա որոշման համաձայն այս ծրագրով արդարադատության նախարարությանը հատկացվել է 1700.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1700.0 հազ. դրամ:

10.09.02.02 Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում

2017 թվականին «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծախսային ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության համակարգի աշխատակիցների համար նախահաշիվը կազմել է 236160.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 218156.26 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 204321.93 հազ. դրամ: Նշված ծրագրով գումար է տնտեսվել թափուր հաստիքների շարժունակության հաշվին:

2016 թվականին «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծախսային ծրագրով դրամարկղային ծախսը կազմել է 208951.10 հազ. դրամ:

ՀՀ արդարադատության նախարարությունը ունի չորս **արտաբյուջետային հաշիվ:**

Արդարադատության նախարարության 01.01.01.16 արտաբյուջետային հաշիվը բացվել է Հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի թիվ 860-Ն որոշմամբ, որով հաստատվել է իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման հետ կապված լրացուցիչ վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը: ՀՀ Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների

պահպանում արտաբյուջետային միջոցների հաշվին>> ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ 420-Ն և 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1334-Ն որոշումների համաձայն: 01.01.2017թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 20121.93 հազ. դրամ, 2017 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 333539.54 հազ. դրամ, ծախսը կազմել է 341458.54 հազ. դրամ, 01.01.2018թ. մնացորդը կազմել է 12202.93 հազ. դրամ: Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ որոշ ապրանքատեսակներ ձեռք բերելու անհրաժեշտությունը տարվա ընթացքում վերացել է :

01.01.2016թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 4686.93 հազ. դրամ, 2016 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 220117.91 հազ. դրամ, ծախսը կազմել է 204682.92 հազ. դրամ, 01.01.2017թ. մնացորդը կազմել է 20121.93 հազ. դրամ: 2017 թվականի ծախսի աճը 2016 թվականի նկատմամբ պայմանավորված է արտաբյուջետային հաշվի մուտքերով:

Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունն ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները դիմորդների կողմից ստանալու և փորձագետներին տալու նպատակով ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 393-Ա որոշման համաձայն թիվ 1 գանձապետական բաժանմունքում բացվել է արտաբյուջետային հաշիվ /01.01.01.21/: 01.01.2017թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 36.37 հազ. դրամ, 2017 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 2079.0 հազ. դրամ, ծախսը կազմել է 2037.0 հազ. դրամ, 01.01.2018թ. մնացորդը կազմել է 78.37 հազ. դրամ: 2016 թվականին այս արտաբյուջետային հաշվին դրամական մուտքեր չեն եղել: 01.01.2017 թվականի դրությամբ հաշվի մնացորդը կազմել է 36.37 հազ. դրամ:

ՀՀ արդարադատության նախարարության 01.01.01.18 արտաբյուջետային հաշվի բացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 25-ի թիվ 858-Ն որոշմամբ, որով հիմնադրվել է ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը:

«Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ստեղծման գաղափարը իրականություն է դարձել ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորման արդյուքում: 2016 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) երևանյան գրասենյակի առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը ստորագրել են Թիվ AAG-111-G-13-001 Ձարգացման Համագործակցության համաձայնագրի իրականացման նամակ թիվ 15 համաձայնագիրը:

ԱՄՆ ՄԶԳ համապատասխան ֆինանսավորումը ստանալու և միջազգային կազմակերպությունների կողմից օժանդակվող ծրագրերին տրամադրվող գումարների շրջանառությունն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 981-Ա որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքում բացվել է ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների նոր հաշիվ:

«ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2016 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված AAG-111-G-13-001 Ձարգացման համագործակցության համաձայնագրի ներքո իրականացվող» դրամաշնորհային ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2017 թվականի հունվարի 26-ի թիվ 64-Ն որոշման համաձայն: 01.01.2017թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 6186.68 հազ. դրամ, 2017 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 43607.53 հազ. դրամ, ծախսը կազմել է 43767.37 հազ. դրամ, 01.01.2018թ. մնացորդը կազմել է 6026.84 հազ. դրամ:

2016 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 7616.68 հազ. դրամ, ծախսը կազմել է 1430.00 հազ. դրամ, 01.01.2017թ. մնացորդը կազմել է 6186.68 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 705-Ա որոշման համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բացվել է 03.05.01.02 արտաբյուջետային հաշիվ՝ Եվրոպայի խորհրդի կողմից ՀՀ էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումների փորձարկում քրեակատարողական հիմնարկների պիլոտային ստորաբաժանումներում» ծրագիրն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային միջոցների տնօրինման համար: Այս ծրագրի նպատակն է փորձարկել էլեկտրոնային մոնիթորինգի տեխնոլոգիաների կիրառումը իրավախախտների և դատավարության սպասող ամբաստանյալների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

01.01.2017թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 16358.38 հազ. դրամ, 2017 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 3772.38 հազ. դրամ, ծախսը կազմել է 19947.67 հազ. դրամ, 01.01.2018թ. մնացորդը կազմել է 183.09 հազ. դրամ:

2017 թվականի հուլիսի 31-ին ՀՀ արդարադատության նախարարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության (ՄԲ Կառավարությունը) միջև կնքվել է «Աջակցություն Հայաստանի կառավարությանը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործում՝ ընդլայնելու օրենսդրական և կարգավորող դաշտը ազդարարների արդյունավետ պաշտպանության համակարգին աջակցելու նպատակով» դրամաշնորհային ծրագրի (Ծրագիր) իրականացման մասին փոխըմբռման հուշագիր (Հուշագիր): Ծրագիրն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս՝ «Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկի: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը ազդարարների պաշտպանության մասով՝ ազդարարներին հնարավորություն ընձեռելով հաղորդել կոռուպցիոն ռիսկերի մասին պաշտպանված եղանակով եւ աջակցել հանրային իրազեկմանն ուղղված գործունեությանը

կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում՝ ընդգրկելով նաեւ ազդարարների պաշտպանության համակարգը :

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցով բարելավելու օրենսդրական և կարգավորիչ դաշտը՝ աջակցելու ազդարարների արդյունավետ պաշտպանության համակարգի ստեղծմանը» դրամաշնորհային ծրագրի արտաբյուջետային հաշվի /01.01.01.20/ միջոցների ծախսման 2017 թվականի նախահաշիվը հաստատվել է ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1230-Ն որոշմամբ: Այս արտաբյուջետային հաշվին 2017 թվականի ընթացքում մուտքագրվել է 18772.16 հազ. դրամ, ծախսը կազմել է 18772.16 հազ. դրամ:

2017 թվականի ապրիլի 7-ին ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) միջև կնքվել է «Հայաստանում դատական արխիվային նյութերի թվայնացման» դրամաշնորհային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման մասին համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր): Ծրագիրն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Դատաիրավական ԾԻԳ): «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «Հայաստանում դատական արխիվային նյութերի թվայնացում» դրամաշնորհային ծրագրի արտաբյուջետային հաշվի /03.03.01.07/ միջոցների ծախսման 2017 թվականի նախահաշիվը հաստատվել է ՀՀ կառավարության 08.06.2017թ. թիվ 615-Ն որոշմամբ: Դատաիրավական ԾԻԳ-ին հատկացվել է 79,979.32 հազ. դրամ (ծրագիր՝ 03.03.01.06 -Դատական արխիվային նյութերի թվայնացում): Ծրագրով նախատեսված է ձեռք բերել 10 հատ համակարգչային սկաներներ՝ 16,637.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով, 1 հատ համակարգչային սերվեր՝ 4,753.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով և համակարգչային ծրագրային փաթեթների մշակման և փաստաթղթերի թվային արխիվացման ծառայություններ՝ 58,588.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

Այնուհետև, ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄՁԳ միջև 2017 թվականի նոյեմբերի 6-ին կնքված լրացուցիչ համաձայնագրով Ծրագրի բաղադրիչներում կատարվել են որոշակի փոփոխություններ, առ այն, որ թվայնացվեն ոչ թե արխիվացված դատական գործերի փաստաթղթերը, այլև գործող դատական գործերի փաստաթղթերը՝ զուգորդելով այդ գործընթացը էլեկտրոնային հայցերի/էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրման, դատարաններում էլեկտրոնային տեղեկատվական և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի (CAST և Datalex) արդիականացման և համապատասխան ֆունկցիոնալության զարգացմամբ: Սա հնարավորություն է տալու քաղաքացիներին և դատարաններից այլ օգտվողներին էլեկտրոնային եղանակով դատարան հայցադիմումներ, դիմումներ, գրավոր ապացույցներ, միջնորդություններ ներկայացնելու, գործի նյութերին էլեկտրոնային եղանակով ծանոթանալու, փաստաթղթերի պատճաններ ստանալու և էլեկտրոնային ծառայության այլ հնարավորություններից օգտվելու համար: Նշված ծրագրով նախատեսված գումարը տեղափոխվել է 2018 թվական:

Կից ներկայացվում է նաև 2017 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից եկամուտների հավաքման մասին հաշվետվությունը: Ներկայացված հաշվետվության մեջ ստացված եկամուտների տարբերությունը ծրագրային ցուցանիշներից կայանում է նրանում, որ հաշվետվության մեջ արտացոլվել են 2017 թվականին ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից փաստացի կատարված գործողությունների դիմաց գանձված տուրքերի և եկամուտների գումարները: 2016 թվականի համեմատությամբ հավաքված եկամուտների տարբերությունը պայմանավորված է փաստացի կատարված գործարքների քանակով:

**ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի ղեկավար՝**

Ն. Խաչատրյան

**Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ-
գլխավոր հաշվապահ՝**

Ջ. Մարգարյան